

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ
ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ՝
ՈՒՂՂՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ
ԵՐԵՔ ԱԹՈՌՆԵՐԻՆ, ԹԵՄԱԿԱԼ ԲՈԼՈՐ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ
ԵՎ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ

«Քրիստոս ծնաւ և յայտնեցաւ»:

Աստուծոյ ողորմությամբ և Ամենայն Հայոց հանգուցյալ Հայրապետին, Տ. Տ. Վազգեն Ա. Կաթողիկոսի հիշատակը մեր սրտին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնեն Ձեզ և Ձեր համայնքներուն բերում ենք ավետիսը մեր Տիրոջ՝ Հիսուսի Քրիստոսի հրաշափառ Ծննդյան, Մեր սրտագին մաղթանքներով հանդերձ:

Սուրբ Ծննդյան կենարար շնորհները թող առատապես բաշխվին Ձերդ Սրբության, սուրբ Աթոռիդ ուխտապահ միաբանության հոգևոր սպասավորներուն և եկեղեցանվեր անդամներուն և համայն հավատացյալ ժողովրդյան, ի շինություն և ի լուսավորումն անոնց հոգևոր ու համայնքային կյանքին:

Սուրբ Ծննդյան ավետիսով ընդունեցեք Մեր սիրո ողջույնը և մաղթանքը, որ Տիրոջ օրհնությամբ շարունակեք Ձեր հոգևոր առաքելությունը մեր Մայր Եկեղեցիի անդաստանի մեջ՝ միշտ Սուրբ Հոգիով ներշնչված:

Եղբայրական սիրով ի Քրիստոս,

Աղոթակից՝

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ

Ս. Էջմիածին

*
* *

Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների առթիվ Կաթողիկոսական Տեղապահի անունով ստացվեցին ամենաջերմ և հարգալից զգացմունքներով գեղուն բազմաթիվ շնորհավորական հեռագրեր և նամակներ մեր նվիրապետական երեք Աթոռների գահակալներից, արտասահմանի և ներքին բոլոր թեմերի առաջնորդներից, ազգային-եկեղեցական, մշակութային, հայրենակցական, տիկնանց, օրիորդաց և երիտասարդաց զանազան կազմակերպություններից, հայ և օտար պաշտոնական անձնավորություններից:

Հանուն Կաթողիկոսական Տեղապահի ջերմ շնորհակալություն ենք հայտնում ստացված պատասխան շնորհավորականների համար:

107-95